ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025Թ ՄԱՅԻՍԻ 12-16-Ը ՇՎԵՅՑԱՐԻԱ (Ք.ԺՆԵՎ)
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **<u>Անունը, ազգանունը՝</u>**

Ժենյա Տեր-Վարդանյան

2. **<u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության բաժնի պետ

3. **<u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>**

2025թ մայիսի 12-16-ը Շվեյցարիա (ք.Ժնև)

4. **<u>Հրավիրող կողմը.</u>**

IATA ուսումնական կենտրոն

5. **<u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>**

Բաժնի գործառույթների կիրառում, այն է՝ ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի կանխարգելում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 11-ի թիվ 1777-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետությունում ավիացիոն պատահարների և միջադեպերի մասնագիտական քննության անցկացման, դասակարգման և հաշվառման կարգի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 24-ի «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկը հաստատելու մասին» N 06-Լ հրամանով հաստատված «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկի» կիրառում:

6. **<u>Քննարկված թեմաները.</u>**

Քննարկվել են ավիացիոն պատահարներին առնչվող կանոնակարգերը, ավիացիոն պատահարներ քննող մարմնի պատասխանատվությունները, պարտականությունները համաձայն ԻԿԱՕ հավելված 13-ի, 19-ի, և ԻԿԱՕ թիվ 9859 փաստաթղթի, թռիչքային

անվտանգության համակարգի անհրաժեշտությունը, ինչպես նաև մարդկային գործոնների, մշակութային և կազմակերպչական մոտեցումների կարևորությունը պատահարների կանխարգելման գործընթացում: Քննարկվել են նաև ավիացիոն պատահարների պետական քննության և միջադեպերի ներքին քննությունների տարբերություններն ու նմանությունները:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Դասընթացի մասնակցություն, ելույթներ, բազմաթիվ շնորհանդեսների ներկայացում, դասախոսական կազմի և ավիացիոն այլ մասնակիցների հետ քննարկումների մասնակցություն:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Ավիացիոն պատահարների կանխարգելման իրականացում:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի հունվարի 24-ի «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկը հաստատելու մասին» N 06-Լ հրամանով հաստատված «Ավիացիոն պատահարների և լուրջ միջադեպերի քննության ձեռնարկի» լրամշակում:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

20.05.2025թ.